

Խմբագրաբացիք ղեկմամբ են ուղղակի
Դիմումք, Редакция „Машак“

ր հարկէ՝ այդ կէտում նրանք իրաւունքով են խօսում, յայց բանը նրանումն է արդեւ յարմար է մտցնել նրանց նոյնպէս և Էջմիածնի ճեմարանում. մեր կարծիքով յարմար է: Որովհետեւ նրանց բերած արդիւնքը բոլորովին չի համապատասխանում քաչաձ ներդրման, ծախիս և ինքնոգն ժամանակին: Արդեօք քանի իւզովաւէտներ կը ստանանք մտնոնելով հին լեզուները ճեմարանում, հազիւ թէ՛ արդարիւնք դուրս եկող լինեն: Մենք այդ եղբարացում ենք նայելով այժման հայ ուսանողաց վրա: Մտվկայում օրինակ կան մօտ 70 հայ ուսանողներ, հայերեւոյ համալսարանի հետ և ամաղէմիաները, և մարտիկ ուսանողներնից միայն երկուսն են լեզուագիտութիւն սովորում: Թիֆլիսի գիմնաղիայում այս երկուս վերջին տարիներում աւարտեցին 20—22 հայեր, և դրանից միայն մէկն է լեզուագիտութիւն ուսանում: Միթէ այսպիսի ջնպիս պրօցէնտի համար, այսինքն մի աշակերտի համար կարելի է չարկարել իսկ 25—30 մարդ, որոնք բոլորովին ոչ միօք, ոչ ցանկութիւն ունեն ուսանել հին լեզուներ, մանաւանդ որ նրանց փոխարէն կարելի է ուսուցանել նոր լեզուներ և աւելի զարծնական գիտութիւնք, իսկ ինչ վերաբերում է լեզուագիտութիւն սովորողներին, որք կազմում են խիստ չնչին պրօցէնտ, նրանք կարող են սովորել այդ լեզուներին պետական ուսումնարաններում, այլ բան է թէ՛ ունենային մենք, հայերս, մի քանի բարձր ճեմարաններ կամ համալսարաններ, այն ժամանակ իր բանայինք նրանցից մինի մէջ լեզուագիտութեան առօրին: Թէ կը հարցնեն ուրեմն ինչ ուղղութիւն հարկաւոր է տալ նորակաւոք ճեմարանի, կը պատասխանենք. ուղղութիւն կարելի է տալ միայն այն ժամանակ երբ կայ որոշ նպատակ, իսկ նպատակը պէտք է լինի երեք 1) պատրաստել ուսուցիչներ ծխական և միջնակարգ դպրոցների համար. 2) կրթված ուսումնական հոգեւորականներ ոչ միայն կովկասի, այլ նոյնպէս և թիւրքաց Հայաստանի համար, որտեղ պիտի կատարեն քարոզչիկներն ու ուրիշ առօրին ծառայեն իսկական և ազ-

և Եսպանիա ընկերակիցներին զբերել և գէն-
քեր յիշատակ առնել և իր սենեակի ծերունի
ճառայ Բալիզոֆիէնին էլ մինչև մահը թո-
շակ կապէ։
Այս կտակը գրելուց յետոյ իշխանը նրան
ծայրէ ի ծայր կարողաց անդիմական երկու օ-
ֆիցերներին առաջ, որոնք նրա Վալիլիէի ըն-
կերներն էին, և «Համաձայն անդիմական օրէն-
քի» խօսքը աւելացնելուց յետոյ, ստորագրեց
նրան։

«Pays» լրագիրը հաղորդում է, որ կայսրու-
հօւ առողջութեան վատ տրամադրութեան
առիթով պ. Բուէ չը կարողացաւ հեռանալ
Նիզնի-Նովորոսից։

Նա աւելացնում է հետեւեալ խօսքերը.
«Մեր իշխանի խեղճ մայրը ծանր կերպով
տկարացած է։

Վերջին լուրերը որ մենք լսում ենք, շատ
վատ են։

«Մենք վախենում ենք մի նոր անբաղու-
թենից»
Տիկին Բարալ-Միլեր կապից հեռագրել է
Լոնդոն, թէ որովհետև իշխան Լուի-Նապո-
լէոնի դիմելով ժամանակին չը հասաւ, «ճէնե-
դօս» շոքեմանը ճանապարհ ընկաւ դէպի Լոն-
դոն։ Յետոյ յիշեալ տիկինը աւելացնում է, որ
մտադրութիւն կայ այժմ, որ իշխանի դիմելը
տեղափոխեն Վնդիա մի փոստային շղթանալի
վրայով։

«Globe» լրագիրը Լոնդոնի թղթակիցը հա-
ղորդում ու պաշտպանում է, որ իշխան Լուի-
Նապոլէոն մի կտակ է թողել։

Պատմում են, որ պ. Բուէ մի հեռագրել է
ստացել պ. Պիեթրից հետեւեալ բովանդակու-
թեամբ։

«Ես կը վերադառնամ ուրբաթ կամ շաբաթ.
Կայսերական իշխանի կտակը նրա սենեակի
արկղումն է։ Իշխանը իր գնալու ժամանակ
նրա բանալին ինձ հաւատաց։»

Այս հեռագիրը ստացվելուց առաջ, պ.
Բուէ-ի իշխանից մի նամակ էր ստացել, և ամեն-
քը կարծում էին որ այդ նամակը իշխանի
միակ կտակն էր։ Այժմ խոնից դուրս է գալի,
որ մի երկրորդն էլ կայ։ Այս երկրորդ կտակը,
ինչպէս պատմում են, գրված է եղել իշխանի
ուղեորովն ու նախնիցաց գիրքը. և բացի պ.
Պիեթրից երեւի ոչ ոք չը գիտէ նրա բովան-
դակութիւնը, որովհետև կտակը գրված է
գիրքը, ուղիղ այն ժամանակ երբ երիտասարդ
իշխանը միայն էր սենեակում։ Այդ կտակի
գոյութեան մասին տեղեկութիւն չեն ունեցել
ոչ պ. Բուէ, ոչ նոյն իսկ կայսրուհին և դուքս
Բասսանո։

Մի քանի լրագիրներ ամենահաստատ կեր-
պով հերքում են «Globe» լրագրի հաղորդած
այն լուրը, որ իբր հանրապետութեան նա-
խագահը կայսրուհուն վշտակցական նամակ է
գրել։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՌԼՆԻԱՅԻՑ

Ունիոյ խնդրոյն վրայ Մարաշէն հեռակալ
կարեւոր տեղեկութիւնները կուտան մեզ։

Մայիս ամսոյ 6-ին Վանք. բռնակցութեան
Ամեն. Կաթողիկոսը և տեղւոյ Պապականաց
Կրօնապետը յիշատակ գնացին և նոյն վե-
սեմութիւնը հետեւին քանի մը բաժին
զօրք ևս տանելով, նախկին բանակին տեղը
վրանաւ նստան 10-12 աւուր չափ և այս
կարճ միջոցի մէջ բաւական զորքեր տեսան,
քանի մը յանձնաժողովներ կազմեցին տեղւոյ
երեւելիներէն, որոց միոյն տեղւոյն հողային և
կառնածական արոց կարգադրութեան պաշ-
տօնը յանձնեցին Իւրաքանչիւր կալուածոց և
հողերու բուն արժէքը որոշելով. ուրիշ մը
պաշտօն տուին տեղւոյն ժողովրդական արեւ-
րագիրը քննելու. ուրիշ մը հարցաքննու-
թիւնները բրին Ունիոյ վրդովման և ըստ ո-
մանց թիւը բնութեան ապստամբական շարժ-
մանց բուն պատճառներն հասկնալու համար.
Բաց յայտնել կառավարութեան ժողովները

կազմեցին և նոր բան մ'ըլլալով Նահիէ մէջ-
իսի անուամբ Բաղադական ժողով մ'ալ կազ-
մեցին 8-10 հոգի հայ, բողոքական, պապա-
կան և տաճիկ երեւելիներէ որոց պաշտօնը
պիտի ըլլայ Ունիոյ և մօտակայ շրջակայից
մանր մունր զորքերը տնօրինել և որոնք ար-
տօնութիւն ունին մինչև 150 զահէական և
ուստրական կամ այլ վէճերն լուծել և 24
ժամ բանտարկել յանցաւորն։

Ձօրանոցը հիմնարկեցին բանակատեղոյն
մօտ, որուն մէջ պիտի ըլլայ կառավարու-
թեան պալատը. առ այժմ տուն մը վարձեցին
կառավարութեան համար մինչև ցաւարտ
քննութեան։ Նախորդ ոստիկանները հանու-
լով, ըստ ընտրութեան ազգային երեւելիաց
Տերութեան և Ազգին հաւատարմ և գոր-
ծունեայ անձեր 20-25 ի չափ ոստիկան կար-
գեցան, և այլն։

Տ. Մկրտիչ կաթողիկոս որքան որ կարե-
ւի էր, աշխատեցաւ զօրանոցի կառուցումն
յետաձգելու և զօրաց յաւելի մնալը տեղւոյն
հասարակութեան անդորրութեան քննասկար
ըլլալը հասկնալուց. սակայն անկարելի եղաւ
յաջողիլ. զի Ողոտ. կայսեր հրամանն այսպէս
է ըսին. 24000 զահէական ըստ նախնական
նորոգութեան Ունիոյ տուրքը տարեկան
մուքաթայի կապել տալու շատ աշխատու-
թիւն եղաւ. սակայն ի գուր. միայն նորէն
թահարելու համար ըլլալու որոշում տրուեցաւ,
ինչպէս վերը յիշեցի և սկսաւ զործարկել.
Հայ դպրանոց մը դնելու համար ալ աշխո-
տութիւն եղաւ. բայց չը յաջողեցաւ.
ուստի Մկրտիչ կաթողիկոս խնդրեց որ գտնէ
հայ օգնական մը արաւի դպրանոցումն, ապա
համար ալ քովակները ինչաւ ըրեր են առ.
Բ. Դաւան. Մկրտիչ կաթողիկոս առաջարկեց
նաև որ Մէհարիթի կանոնին համեմատ արոց
մէկ մասը Ունիոյ հասարակութեան օգտին
յատկացուի. քովակները խոստացան Ազգ-
վարժարանաց հայկաբան և տաճկաբան երկու
դաստառ բերել տալ ամսական 1000ական
դրաց ըլլալու և յորքունուստ տրուելու պայ-
մանաւ։

Ունիոյ հասարակութիւնը երկու հանրա-
գիր մատոց վեմէ. քովակներուն որոց մէկը
11 յօդուածէ բաղկացեալ է և հասարակու-
թեան կողմանէ առ կառավարութիւնն լըն-
դիրներ կը պարունակէ. իսկ միւսը 15-17 տարե-
ի վեր կառավարութեան անկաւ պաշտօնէից
և շրջակայ տաճիկ գիւղացուց և Ձեքէզաց
ձեռքէն Ունիոցուց կրած հարստահարու-
թեանց ծրագիրն է, որոց օրինակները ի Պատ-
րիարքարան պիտի ղեկուցին։

Պատմականը տակաւին չը վերադարձան.
որոց բացի 6-էն ներդրութիւն պիտի ըլլայ
Պօլսէն եկած հրամանն համեմատ. բանտար-
կելուց ալ բացի 6-օրէն հողի ներդրութիւն
պիտի շնորհուի լընքը։

«Դանք ուրիշ խնդրոյ մը. Ունիոյ վրդովման
և խանգարման բուն շարժառիթը կաշառա-
կեր պաշտօնէից անիրաւութիւնները և շր-
ջակայ տաճիկ գիւղացուց բռնաբարութիւնն
եղած են, որոց սյլ ևս չը կարենալով հան-
դուրդել Ունիոյն պաշտպանողական դիրք
ձեռք տալու հարկադրուեցան»
Ի վերջոյ Սեգ. Պատրիարքարան հաղոր-
դեալ տեղեկութիւն մը կը ծանուցանէ թէ
500-ի չափ զօրք Ձէյթուն մտնելէ ծածկի
դպրանոց մը հաստատուելէ, 24000 զրքի տա-
րեկան արբունի տուրքը մերժուելէ զատ Ձէյ-
թունի ժողովրդականներէն երեք հոգի ժո-
ղովրդական ընդդիմութիւնը գրգռելու կասկա-
ծանք տարազրկ եղեր են։

(Հարկնիք)

ՆԱՄՍԱԿ ԹԻՒՐԲԻՍՏԻՑ

Ձեռք յիշեր որ երբեք պատրիարքարանի և դե-
պնատանց յարաբերութիւնը այսքան յաճախ և

զած լինեն. Ներսէս սրբազան ամառուան եղանա-
կը Վոսիորի տախկան արհուրդը Պէյթօզ կանց-
նէ. Պէյթօզի դէմ են թերաբեա և Պիպիւսիներէ
ուր բանաւը կը բնական դեպքանք, այս մերձակա-
յութիւնը բաւական դիւրութիւն կընծայէ յարաբե-
րութեանց. անցեալ օր Լէյթար պրեզիդենտն կու-
գայ առ Սրբազանն որ կանխաւ դիմաւոր չքեղ
կառք մը նաւամատոցն կը խրկէ և խիստ պատա-
ւոր կերպով անդրական դեպքանք կընդունի. տե-
սակցութիւնը ժամ մը կը տեւէ և բնական է որ խօսքը
ազգային կարևոր խնդրոց վրայ կը դառնայ. դե-
պքանք յայտարարեց և Պատրիարքին թէ երեք տարի
վերջ բնաւ հարստահարութեանց նշոյլ մը իսկ պիտի
չը տեսնուի ի Հայաստան, և արդէն ասած է «Տեղ-
բանակերտէն ի կարին երթեալով մը հիւպա-
տոններն կը հաղորդեն թէ ճանապարհներն զգալի
կերպով ապահով վիճակը ստացեր են, որ գտնու-
թիւն պատճառելու է»։ Մի քանի ամիս յա-
ռաջ նոյն Լէյթար պ. Չերազի կը յայտարարէր
թէ անմիջապէս բարեկարգութեանց ձեռնարկու-
թիւն պիտի լինի և կը յաւելցնէր «գիտէ որ, չեմ
ասէր այս ինչ ժամանակը, այլ անմիջապէս» այդ
ան միջապէս էս էս ի վեր բաւական ատեն ան-
ցաւ և դեռ կը սպասեմք։ Մենք աւելի դո՛ւ պիտի
լնեմք եթէ դեպքանք փոխանակ մեզ աւետելու
թէ երկար տարիներ յետոյ հարստահարութեանց
փախճան պիտի լինի մեզ ասէր թէ հիմա երբ պիտի
սկսին բարեկարգութիւնը։

Այս պաշտօնական յարաբերութիւնը նոր կեր-
պարանք մ'ալ սկսան առնուլ. Վալը, ուրբաթ
գիշեր, անգղիական դեսպանատունը մեծ երեկոյթ
(soiree) կայ. տիկին Լէյթար հրաւիրանաց զիւր
խրկելով առ Պատրիարքն խնդրած է որ Նորին
Սրբազանութիւնն այդ երեկոյթի ներկայ գտնուի։

Ինչպէս գիտէք այդ երեկոյթներն առիթ են
քաղաքական անձանց միասին գտնուելու, և դեռ
չէր եղած որ կերական մը, թէկէ քաղաքական
անձ մը եղած լինի, երեկոյթին համար հրաւեր ըն-
դունած լինէր. հետաքրքիր կը սպասեմք թէ ինչ
պէս պիտի պատասխանէ Ներսէս սրբազան դե-
պքանք տիկինը հրաւիրանաց, պիտի գտնուի ներ-
կայ, թէ վերջը արդէք կը լինի, տեսնեմք։
Քանի մը օր առաջ Ներսէս Սրբազան Բուսիոյ
դեսպանի պրեզիդենտն գնաց և կը հաւատեն թէ
խիստ կարեւոր տեսակցութիւն մը ունեցեր են։

Մենք նամակով հաղորդած ենք թէ Պատ-
րիարքը մեծ վիզիլի հետ տեսնուեցաւ. խորհե-
տին-բաշա ինչեք փախազած էր այս տեսակցու-
թեան և խնդրած է Սրբազանէ որ եթէ լըր Պատ-
րիարք չը ներկայանայ պարզ իբր անհատ մը թող
հաճի իւր ապարանքն հրամայել. Սրբազանը դացած
էր. Այս տեսակցութեան նկատմամբ շատ մը
տարածաշրջաններ կան և կտան թէ Պատրիար-
քն այս ինչ առաջարկութիւնը արած է վիզիլին,
այս ինչ պատասխանը տուած է, սակայն կրնայ
ապահով լինի որ այդ խօսակցութիւններն ան-
հիմն են։ Սրբազանը գաղտնի կը պահէ ինչ որ
խօսեցան միմեանց հետ, մինչև որ իւր առաջար-
կութեանց մասին որոշ պատասխան մը ընդունի.
վերադառնալ կրկին տեսութիւն մը տեղի պիտի ունե-
նայ։

Ձէյթունի հարցը տխուր կերպարանք մը կառ-
նու և մեր մամուլը որչափ որ կարելի է բողոքել
կը բողոքէ, բայց ինչ օգուտ. զինուորական գունդ
մը մտեր է Ձէյթուն բարեկարգչներու հետ միա-
սին, զինուորանոց կառուցեր են, թողարկութեան
կառավարին տաճիկ մը պիտի լինի, իսկ բա-
րեկարգութեանց խօսք, հարցնող անգամ չը կայ.
Ձէյթունի վիճակն ծանր և ապագայ ներդրութեանց
տեղի պիտի տայ. կը հաւատան թէ կառավարու-
թիւնը Ձէյթունի մէջ իւր ունեցած հողերը տաճ-
կաց կը ծախէ. բնական է որ այն դիտարկու-
թեամբ որ այդ լեռներն զուտ սեպականութիւն
հայոց չը համարեն։ Այս բարի դրացութեան
արդիւնքն գուցէ շատ սուղի նստի. Հարստահա-
րութիւններն Կ. Պօլսէ մի քանի ժամ հեռու քա-
ղաքաց մէջ իսկ ամենայն ազատութեամբ ի գործ
կը դրուին. Նիկովիոյ հայոց առաջնորդն Կ. Պօ-
լս հանելով և իւր հետն առած բողոքականաց
ներկայացուցչն Անդրիոյ դեսպանին ներկայացաւ
բնեկարգութեամբ պ. Չերազի, յայտնելու համար
թէ Նիկովիոյ որ Կ. Պօլսէ մի քանի ժամ հեռու
է երկաթուղով, չէքէզներու ոտից կոխան եղած,
40,000 չէքէզներն կը կեղեքեն ժողովուրդը, և
այդ վայրենի խռովանքն զգալու համար միայն 17
գիւնուր կայ. Լէյթարն ապա՛ծ է, չը գիտէր ինչ
ըսէ. ինչ պատասխանէ նոյն իսկ իւր երկրի ազա-
տական մասին որոշ ծիծաղն պիտի դարձի լընով
թէ 17 քօրքերով մեծ գաւառի մը բարեկարգու-
թիւնը պահպանելու կուզուի. Դեսպանն խոստա-
ւարած է, անշուշտ հետապնտ ալ պիտի լինի զայն
կաղարկելու, զի գործը Կ. Պօլսոյ շատ մօտ է և
խաբէ գիւրին չէ. Բայց ասիական բարեկարգու-
թեանց համար ինչ հրաշք պիտի գործէ զայն

չեմք գիտեր. պաշտօնական հայ մը դիտել է պ.
Լէյթարին թէ անհարկն է տաճկաց մէջ բա-
րեկարգող անձ գտնել «Եթէ ամենէն աւելի
ձեր համարումը վայելոյն Միդիաթ քաղաք չէ, և
նա ընդարձակ գաւառի մը կառավարին է, առ-
կայն իւր անմիջական հսկողութեան ներքեւ եղող
գիւղերէն 50 հայ ընտանիքներ չը կարենալով տո-
կալ հարստահարութեանց սատակութեան, թողն-
են իրենց հայրենիքը և փախաւական Կ. Պօլս
հասած են. ալ որո՞ւ վրայ է ձեր յայտը»։ Արդարեւ
մի քանի օրէ կը տեսնեմք մեր եկեղեցւոյ անկիւն-
ներն Շամլէն եկած խեղճ հայեր, որք կը պատմեն
թէ ինչպէս անհարկ եղած է արդի իրենց գիւղե-
րու մէջ, ուր չէքէզ և տաճիկ Միդիաթ քաղաքի
լուսաւորեալ և քաղաքակրթիկ հսկողութեան ներ-
քեւ, ձեռք ձեռք տուած քրիստոնեայ ժողովուրդն
բուն զօրութեամբ կեղծք իրենց միայն նպատակ
արած են։

Հիւպատոններու ընտրութիւնն ինչ ազդեցու-
թիւն պիտի ունենայ, այդ չեմք գիտեր որոշ, սա-
կայն այս առիթը երբ հեռագիրն հաղորդեց թէ
Անդրիա Գ. ի Եւրոպայի համար հիւպատոններ
ընտրած է, բնակութեան վայրն Կարին լինելով,
Կ. Պօլսոյ հայոց մէջ դժգոհութիւն յայտնուեցաւ.
բոլոր հայ թերթերն միաբնական բողոքեցին թէ ինչ
ասել է Հայաստան բառն վերցնել և Գիւրթութեան
ասել. բանաստեղծական մտածութիւններն առ այժմ
մէկ կողմ դնելով քաղաքական տեսակէտով խնդր-
եք կը շօշափենք անկեր կը տեսնուի թէ Անդրիա
ամեն կերպով կը ջանայ Հայաստանի ինքնավարու-
թեան խնդիրն իսկողել. Հայաստան բառն իսկ իւր
ականջներուն աղէկ չը հնչէր և նախամեծար կըն-
տրէ վայրագ խռովանք մը անուամբ իրենց բաղ-
մարարեան Հայաստան, Arménie անունն. Երբեմն
աւստրիական պետական անձ մը կատէր թէ խա-
վա լոկ աշխարհագրական անուն մ'է. կապազայն
դառն կերպով ծաղրեց զԱւստրիա. ուսկայն Պի-
քօնաֆիլիտ շատ աւելի արթուն գտնուել կը կար-
ծէ, մեզ համար այդ աշխարհագրական բառն
չնշելով, հայ ազգը, առանց քաղաքական կիանքի,
առանց հայրենիքի, առանց աշխարհագրական հո-
ղի կտորի մը անկեղծաբան ժողովուրդ մը նկա-
տուի կորսնցնելով ու է յոյս ապագայի համար, և
այս կը կոչուի Արեւմտեան Հայաստանը. Կա-
ղաք ալ կը լըր թէ ուրիշ է։

ՄԵՍԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 25 յունիսի. «Правит.
Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ երեկ
երեկոյեան Սեծ Իշխանուհի Նիկոտիկա իր
օգոստոսիւս որոց հետ միասին վերադարձաւ
արտասահմանից։

ԲՈՒՇԱՅՈՒՆ, 25 յունիսի (7 յուլիսի)։ Վաղը
սպասում են բոլորական իշխանի գալստեա-
նը։

ԼՕՆԻՍ, 25 յունիսի (7 յուլիսի)։ Ձինացիք
Կաշար քաղաքը վերցնելու ժամանակ, նրա
մահաճետական բնակիչներին մի մասը կոտորե-
ցին, մի մասը փախան և մնացած մասն էլ
կալանաւորեցին քաղաքի ամրոցում։ Կաշար
քաղաքի բնակիչները վաճառ են, որ եթէ
քաղաքը նորից անցնի Ձինացոց ձեռքը, այն
ժամանակ նրանք բոլորն էլ կը փախան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 25 յունիսի. «Правит.
Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ յունիսի
22-ին Իրկուսոսի քաղաքը ամայի է դարձել
մի սարսափելի հրդեհից։ Ճաշոյր թաղի գոհ
բնացին հրդեհին։ Բազմաթիւ բնակիչներ ա-
ռանց պատապարանի մնացին։

ԲՈՒՇԱՅՈՒՆ, 25 յունիսի (7 յուլիսի)։ Երեկ
կէսօրին բոլորական իշխանը վարնա հասաւ։

ԼՕՆԻՍ, 25 յունիսի (7 յուլիսի)։ Ձինա-
ցիք նորից վերցրին Կաշար. բնակիչները մա-
սալի փախան, և մասամբ կոտորվեցան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 25 յունիսի. Պետական
բանկի 50% տոմսակը արժէ առաջին շրջանի
95 ռ. 25 կ., երկրորդ 95 ռ. 1., երրորդ 95
ռ., չորրորդ 95 ռ., ներքին 50% առաջին
փոխառութեան տոմսակը արժէ 240 ռ.,
երկրորդ 234 ռ. 50 կ., արեւելեան առաջին
փոխառութեան տոմսակը արժէ 92 ռ. 50 կ.,
երկրորդ 92 ռ. 50 կ., ոսկի 8 ռ. 39 կ.։ Ռու-
սաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23 1/16 պէնն։
Տրամադրութիւնը թող է։

Խմբագիր-Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՈՒՆԻ

Ե Ն Ե Ե

